ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«Պետության և իրավունքի հիմունքներ»

առարկայից դպրոցականների օլիմպիադայի

ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (2026 թ.)

Կրթական
կազմակերպությունը_____

_____

Ազգանուն _____

Անուն _____

Հայրանուն _____

Սիրելի աշակերտնե՛ր,

Գրավոր աշխատանքները բաղկացած են հետևյալ առաջադրանքներից (գնահատման ձևերը և միավորները տրված են հենց աշխատանքում)՝

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (ընդամենը 3 միավոր):

2. Համապատասխանեցման առաջադրանքներ (ընդամենը 2.5 միավոր):

3. Կառուցված պատասխանով առաջադրանքներ (ընդամենը 1 միավոր):

4. Գծապատկերի լրացում (1,5 միավոր):

5. Շարադրանք (2 միավոր):

*Յուրաքանչյուրի աշխատանքի **ընդհանուր** միավորային արժեքն է՝ 10:*

1. **Նշեք ճիշտ պատասխանը՝ այն ընդգծելով** (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0.5 միավոր).

1.1. Ստորև թվարկվածներից ո՞րը գործող մասնագիտացված դատարան Չէ Հայաստանի Հանրապետությունում՝

ա) Հակակոռուպցիոն դատարան,
բ) Տնտեսական դատարան,
գ) Վարչական դատարան,
դ) Սնանկության դատարան:

1.2. Ստորև բնորոշումներից ո՞րը ճիշտ Չէ:

ա) Փաստաբանների դերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով իրավաբանական օգնություն ցուցաբերելն է անձի իրավունքների, ազատությունների և շահերի ոչ միայն պաշտպանության, այլև իրականացման ուղղությամբ:
բ) Փաստաբանն իրավաբանական օգնություն է տրամադրում անձի իրավունքների, ազատությունների և շահերի ոչ միայն պաշտպանության, այլև իրականացման ուղղությամբ՝ բոլոր հնարավոր միջոցներով և եղանակներով:
գ) Փաստաբանը ներկայացնում է անձի շահերը դատարաններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարմանան մարմիններում, ինչպես նաև այլ անձանց հետ հարաբերություններում:
դ) Փաստաբանի ծառայությունները վճարովի են, սակայն ՀՀ Սահմանադրությամբ պետությունը ստանձնել է մարդկանց անվճար իրավաբանական օգնություն ապահովելու պարտականություն:

1.3. Նշեք ճիշտ տարբերակը՝ այն ընդգծելով:

Ֆիզիկական անձի լրիվ գործունակությունը ծագում է՝
ա) **18 տարին լրանալու պահին,**
բ) ծննդյան պահին,
գ) 20 տարին լրանալու պահին,
դ) 16 տարին լրանալու պահին:

1.4. Որո՞նք են զանցանքը հանցանքից տարբերակելու հատկանիշները. ընտրել երկու ճիշտ հատկանիշ՝

ա) սովորութային իրավունքի նորմով սահմանված լինելը,
բ) **հանրային վտանգավորության աստիճանը,**
գ) մեղավորության աստիճանը,
դ) **վարչական իրավունքի նորմով նախատեսված լինելը:**

1.5. **Նշեք ճիշտ տարբերակը՝ այն ընդգծելով:**

ա) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են գործել իրենց հայեցողությամբ, եթե տվյալ հարցն օրենքով հստակ կարգավորված չէ:
բ) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են կատարել նաև այնպիսի գործողություններ, որոնք թեև անմիջականորեն նախատեսված չեն օրենքով, բայց բխում են իրենց գործառույթներից:
գ) **Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձին իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:**
դ) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որոնք արգելված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով և չեն խախտում այլոց իրավունքներն ու օրինական շահերը:

1.6. **Նշեք ճիշտ տարբերակը՝ այն ընդգծելով:**

ա) Հանցավոր ինքնավստահության դեպքում անձը չի նախատեսում իր գործողության հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև պարտավոր էր և կարող էր դրանք նախատեսել:
բ) **Հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է իր գործողության հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն:**
գ) Հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է իր գործողության հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացումը և ցանկանում է դրանց վրա հասնել:
դ) Հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է իր գործողության հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և գիտակցաբար հաշտվում է դրանց վրա հասնելու հետ:

2. Համապատասխանեցրեք ստորև բերվող հասկացությունները դրանց նկարագրությունների կամ սահմանումների հետ՝ ստորև նշված թվերի տակ ավելացնելով համապատասխան տառերը (յուրաքանչյուր ճիշտ համապատասխանեցում գնահատվում է 0.5 միավոր).

ա) Զախ գաղափարախոսություններ	1. Գաղափարախոսություն, որը հենվում է այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են անհատը՝ բացարձակ արժեք, բոլորի հավասարությունը օրենքի առջև, իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների անօտարելիությունը, մասնավոր կյանքի պաշտպանությունը, համընդհանուր ընտրական իրավունք և այլն:
բ) Ազատականություն	2. Քաղաքականություն և հրապարակախոսություն, որն ուղղված է <<ժողովրդական լայն զանգվածներին>> :
գ) Ռեակցիոնիզմ	3. Գաղափարախոսություններ, որոնք հանդես են գալիս հօգուտ սոցիալական հավասարության, հավասար հնարավորությունների, տնտեսվարման հանրային ձևերի և ընդդեմ հասարակության սոցիալ-դասակարգային աստիճանակարգության :
դ) Պոպուլիզմ	4. Տնտեսական քաղաքականության սկզբունք է, որի համաձայն՝ պետական իշխանությունների միջամտությունը տնտեսական հարցերում պետք է հասցվի նվազագույնի՝ <<զիշերային պահակի>> դերի՝ տնտեսական օրենքների, կանոնների հսկողության :
ե) Լեսսե-ֆեր	5. Առկա կարգերի դեմ ուղղված շարժումներին հակադրվող քաղաքականություն և հրապարակախոսություն :

1	2	3	4	5
բ	դ	ա	ե	գ

3. Լրացրեք բաց թողած բառերը (յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0.5 միավոր):

- Միջազգային իրավունքի աղբյուր է համարվում որպես իրավական նորմ ճանաչված միջազգային սովորույթը՝ իբրև _____ ապացույց: (*համընդհանուր պրակտիկայի)*

- Միջազգային հարաբերություններում ՄԱԿ անդամ պետությունները պարտավոր են ձեռնպահ մնալ ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից: Բացառություն են կազմում երկու դեպք՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանության նպատակով ընդունված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ թույլատրված ուժի գործադրումը և անհատական կամ կոլեկտիվ _____ _____ իրավունքը: (*ինքնապաշտպանական*)

4. Ստորև բերված աղյուսակում լրացրեք միջազգային իրավունքի առնվազն երեք սկզբունք: Միայն մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 0.5 միավոր, երկու ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, երեքը՝ 1,5 միավոր:

Նշեք միջազգային իրավունքի առնվազն երեք սկզբունք		
Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունք	Ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի արգելքի սկզբունք	Ներքին գործերին չմիջամտելու սկզբունք

Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունք
Տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության սկզբունք
Պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունք

5. Ներկայացրեք մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգը հետևյալ սխեմայով՝

- Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագիր (0,5 միավոր), ***բնորոշում և առնվազն մեկ փաստաթղթի օրինակ.***

(ՄԱԿ–ի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948), ՄԱԿ–ի կողմից ընդունված Մշակութային բազմազանության վերաբերյալ համընդհանուր հռչակագիրը (2001), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր (1966), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը (1966) և այլն)

- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառույց (0,5 միավոր), ***բնորոշում և առնվազն մեկ կառույցի օրինակ.***

(ՄԱԿ-ի կոմիտեներ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, Երեխայի իրավունքների կոմիտե և այլն)

- Մարդու իրավունքներին վերաբերող տարածաշրջանային պայմանագիր (0,5 միավոր), ***բնորոշում և առնվազն մեկ փաստաթղթի օրինակ.***

(Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների վերաբերյալ եվրոպական կոնվենցիան (1950), Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան (1966), Մարդու իրավունքների արաբական խարտիան (1994) և այլն)

- Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային կառույց (0,5 միավոր), ***բնորոշում և առնվազն մեկ կառույցի օրինակ.***

(Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարան, Մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան դատարան և այլն)

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
Պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների
թեկնածու Տարոն Սիմոնյան

Քննական հանձնաժողովի կազմը

1. ***Սիմոնյան Տարոն***՝ նախագահ,
2. ***Վիրաբյան Գևորգ***՝ անդամ,
3. ***Աբաջյան Ռոզա***՝ անդամ: